

**«Մաքսային պարտավորությունների՝
կանխավճարներից մարման եղանակները և
հերթականությունը սահմանելու մասին»
Հայաստանի Հանրապետության կառավարության
որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի _____ N__-Ն

**ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐԻՑ ՄԱՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Մաքսային կարգավորման մասին» օրենքի 39-րդ հոդվածի 13-րդ մասին
համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել մաքսային պարտավորությունների՝ կանխավճարներից
մարման եղանակները և հերթականությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Մաքսային կարգավորման մասին»
օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի
դեկտեմբերի 3-ի ՀՕ-379-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հավելված

ՀՀ կառավարության 2026 թվականի _____ -ի

N____-Ն որոշման

**ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐԻՑ ՄԱՐՄԱՆ
ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

1. Սույն հավելվածով կարգավորվում են «Մաքսային կարգավորման մասին» օրենքով սահմանված մաքսային պարտավորությունների՝ կանխավճարներից մարման եղանակների և հերթականության հետ կապված հարաբերությունները:

2. Մաքսային միասնական հաշվին առկա կանխավճարներից մաքսային պարտավորության մարում է համարվում օրենսդրությանը համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա պարտավորությունների գումարների հաշվեգրումը մաքսային միասնական հաշվից համապատասխան վճարի գծով եկամուտը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

3. Մաքսային պարտավորություններ վճարողը մաքսային պարտավորությունների մարման նպատակով կարող է մաքսային մարմինների կողմից կիրառվող էլեկտրոնային համակարգի միջոցով ինքնուրույն սահմանել այդպիսի պարտավորությունների մարման առաջնահերթությունը՝ նախանշելով այն մաքսային փաստաթղթերի տվյալները, որոնցում հաշվարկված պարտավորությունները պետք է մարվեն առաջնահերթության կարգով:

4. Մաքսային պարտավորություններ վճարողի կողմից մաքսային պարտավորությունների մարման առաջնահերթությունն ընտրված չլինելու պարագայում՝ մաքսային պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ վճարման ժամկետ ունեցող պարտավորությունների առաջնահերթության սկզբունքի:

5. Այն դեպքում, երբ մաքսային պարտավորությունների՝ օրենսդրությամբ

սահմանված վճարման ժամկետները նույնն են, ապա այդպիսի պարտավորությունների մարումն իրականացվում է ըստ ավելի վաղ ծագած պարտավորությունների կատարման առաջնահերթության սկզբունքի:

6. Միևնույն մաքսային փաստաթղթի հիման վրա ծագած մաքսային անձնական հաշվի քարտում հաշվառված պարտավորությունները կանխավճարի գումարներից մարվում են հետևյալ հերթականությամբ`

1) մաքսային կանոնների խախտման մասով արձանագրված վարչական տուգանքների գումարներ.

2) մաքսատուրքերի գծով պարտավորություններ.

3) հարկերի գծով պարտավորություններ.

4) _____ ներքին _____ շուկայի _____ պաշտպանության միջոցների գծով պարտավորություններ.

5) _____ մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի գծով պարտավորություններ.

6) պետական տուրքի գծով պարտավորություններ.

7) _____ մաքսային վճարների և _____ մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի և վճարների մասով տուկոսների գումարներ?

8) _____ մաքսային վճարների և _____ մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի և վճարների մասով տույժերի գումարներ.

7. Անկախ սույն հավելվածի 3-րդ և 6-րդ կետերով սահմանված կարգավորումներից, այն դեպքում, երբ մաքսային պարտավորությունների վճարողին մաքսային մարմնի կողմից անբողոքարկելի դարձած վարչական ակտով առաջադրվել է մաքսային վճարների և մաքսային մարմինների կողմից գանձվող այլ վճարների վճարման պարտավորություն, և (կամ) առկա է վերջինիս կողմից չմարված վարչական տուգանքի պարտավորություն, ապա առաջնահերթ մարվում են տվյալ վարչական տուգանքի, իսկ այնուհետև առաջադրված վճարների պարտավորությունները:

8. Մարված մաքսային պարտավորությունների գումարներն արտացոլվում են գանձապետական համապատասխան հաշիվներին` դրանց մարման օրով: